



ՏԱՍԵՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.

Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՂԱՆԻՍՏՈՒԹՅՈՒՆ

Կոչ զիբը ամուսնութեան մէջ.—Ներքին Տեսչարանը իր անհատական շահերը չի պահպանում. Նրանի վեճ-Վարչախոսակց. Նրանի Շուկայէրէց. Նրանի Շուկայ. Ներքին լուրեր.—ՀԻՆՎԵՍՏՈՒ ԱՊՐԻԼԻ 5.—ՏԱՍԵՆ ԱՊՐԻԼԻ 5.

ԿՆՈՋ ԳԻՐԲԸ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ի՞նչ բան է ամուսնութիւնը. դա մարդու և կնոջ մէջ ընկերակցութիւն է, որը կապում է երկուսի մէջ երբ նպատակով նախ բուն ֆիզիոլոգիական, սեռական նպատակով, երկրորդ՝ հասարակական նպատակով, այսինքն ընտանիք ստանալու հասարակական հաստատութիւն կազմելու նպատակով և վերջապէս երրորդ՝ բարոյական նպատակով, այսինքն երկու տարբեր սեռերի ներկայացուցիչների փոխադարձ կատարելութեան, փոխադարձ բարոյական լրացման նպատակով: Ամուսնութեան ֆիզիոլոգիական ֆունկցիայի հետեանքը լինում է զաւակների աշխարհ դալը, որոնց պահելը, կրթելը, մարդկութեան ապագայ օգուտէն անդամ պատրաստել՝ կոչված է ընտանիքը իր հասարակական-բարոյական ֆունկցիայի շնորհով:

Բայց և այնպէս, ինչպէս նա կայ, առանց զուգորդելու ամուսնութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ մի ընկերակցութիւն մարդկային երկու սեռի ներկայացուցիչների, կնոջ և մարդու մէջ, մի բարոյական ընկերակցութիւն, մի քաղաքացիական հաստատութիւն, որը ունի թէ իր ֆիզիոլոգիական, թէ իր հասարակական-նիւթական և թէ իր բարոյական կողմը: Աւելի բուն ասած՝ ամուսնութիւնը մի դաշն է մարդու և կնոջ մէջ, որը կապում է երկուսի մէջ երկուսի սեռական, հասարակական-նիւթական և բարոյական փոխադարձ օգտի համար:

Որպէս քաղաքացիական հաստատութիւն, ամուսնութիւնն ունի այն բոլոր քաղաքացիական յատկութիւնները, և իրաւաբանական կողմերը, որ ունի գրաւոր թէ բերանացի դաշնագրութեան վրա հիմնված ամեն մի ընկերակցութիւն:

Այդ կողմը, ինչն եկեղեցին, որը քաղաքացիական մարդկութեան մէջ մինչև վերջին ժամանակները մէնակ ունէր ամուսնական դաշն կապելու արտօնութիւնը՝ նայում էր ամուսնութեան վրա ուրիշ տեսակետից, քան թէ եկեղեցական միւս խորհրդակատարութիւնների վրա: Արդէն եկեղեցին, որը թէ և ընդունում էր պատկեր որպէս եկեղեցական խորհուրդ, ինչն մէնակ արտօնութիւն ունենալով պատկեր կատարելու՝ ահամայ ընդունում էր պատկեր արարողութեան կատարման մէջ քաղաքացիական, իրաւաբանական գործողութիւն, այն է վրկաների ստորագրութիւնը, մինչդեռ այդ իրաւաբանական գործողութեան անհրաժեշտութիւնը կատարելապէս բացակայ է բուն եկեղեցական մկրտութեան, հաղորդութեան և այլ խորհրդների կատարման ժամանակ:

Ուրեմն եկեղեցին էլ, միակ իրան վերապահելով պատկեր կատարման արտօնութիւնը, այնու ամենայնիւ ստիպված էր նայել պատկեր ամուսնութեան վրա, մասամբ որպէս մի քաղաքացիական, իրաւաբանական զաշնագրութեան վրա, որը նա միայն օրհնում, սրբացնում էր:

Սակայն պարզ է, որ իրան վերապահելով պատկեր կատարման արտօնութիւնը, եկեղեցին, որը մի ժամանակ տարածում էր իր իշխանութիւնը և շատ ուրիշ հասարակական, քաղաքացիական գործողութիւնների վրա, որոնք հետզհետէ անցան եկեղեցական իշխանութեան ձեռքից քաղաքացիական իշխանութեան ձեռքը:

Գիական իշխանութեան ձեռքը, մասամբ յատկացրեց և ամուսնական հաստատութեանը իր տեսակետին համեմատ մի բնաւորութիւն: Ինչպէս եկեղեցին երբեք չէր բողոքում մարդկանց անհասարակութեան ստրկութեան և ճորտութեան դէմ, այլ միայն յորդորում էր աշխարհի մեծահոգի և մարդասէր լինել իրանց ճորտերի հետ, իսկ ճորտերին՝ հնազանդ լինել իրանց տերերին, —եկեղեցին իր տեսակետին հաստատելով մնալու համար, չէր կարող և ամուսնական, բուն քաղաքացիական ընկերակցութեան մէջ ընդունել դաշն կապող երկու անհատների մէջ իրաւունքների կատարելապէս հասարակութիւնը, այլ օրհնելով պատկեր մարդուն յորդորում էր աշխարհ լինել իր կնոջ վրա, իսկ կնոջը՝ հնազանդ լինել մարդուն:

Բայց որովհետեւ ամեն մի դաշն, ամեն մի դաշնագրութիւն, ամեն մի կօնարակ, որը հիմնվելով երկու անհատների փոխադարձ կամուրջ համաձայնութեան վրա կայացնում է մի քաղաքացիական, իրաւաբանական-բարոյական ընկերակցութիւն, ունի իր սկզբը (կօնարակի կապելու օրհնելը) (մի կողմի կամ երկու կողմերի դաշնագրութիւնը չէր կատարելու պատճառով) ունենալ և իր վախճանը, այսինքն խզվելը.—ուստի եկեղեցին էլ ստիպված՝ ճանաչեց, ամուսնական ընկերակցութեան, որպէս քաղաքացիական հաստատութեան մէջ կապված զաշնագրութիւնը խզելու մի քանի պատճառներ:

Այս պատճառները գլխաւորապէս սրանք են. 1) դաշնագրեր կապած երկու կողմերից երկու ամուսնիկները մինի մահը, 2) ամուսնիկներից մինի քաղաքացիական մահը, այսինքն օրհնելու դատաստանի վճռով քաղաքացիական իրաւունքներից զրկվելը, 3) ամուսնիկներից մինի խնդրագրութիւնը, 4) ամուսնիկներից մինի ապացուցված անբարոյականութիւնը, կամ ամուսնական անհասարակութիւնը, և թէև շատ հազուադէպ ամուսնիկներից մինի սեռական անընդունակութիւնը:

Բայց, ինչպէս տեսնում է ընթերցողը, այդ բոլոր պատճառները՝ այնպիսի պատճառներ են, որոնք ամուսնութեան ընկերակցութեան երկու անհատներից մինին զատապարտելով իսկ միւսին ամուսնական կապելուց պատճառելով, կողմերից միայն միայն միջոց են տալիս նորից կապել նոր ամուսնական կապերը, ուրեմն ստեղծում են իրերի այնպիսի գրութիւն, երբ տեղի է ունենում ոչ թէ ապահաւան, այսինքն ոչ թէ երկու կողմերին իրաւունք է տրվում նորից կապել ամուսնական կապերը, այլ միայն մի կողմին, եկեղեցու տեսակետից արդար, առողջ կամ բարոյական կողմին, իսկ միւս կողմը, որպէս մեղաւոր, զատապարտվում է այլ ես երբեք նայանման ամուսնական կապերը չէր կապելու: Ուրեմն իրերի այդ տեսակ գրութիւն ստեղծում է ոչ թէ ապահաւան, այլ միմիայն բաժանում է: Առաջին դեպքում երկու կողմին էլ նորից իրաւասէր են դառնում, երկրորդ դեպքում միայն մի կողմը, դառնում է իրաւասէր, այն ինչ միւս կողմը դառնում է իրաւագործ:

Միւս անգամ կը տեսնենք թէ այդ տեսակ գրութեան մէջ ի՞նչ է լինում թէ մարդու և թէ կնոջ վրէժակը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՅՏՏՈՒԹԻՒՆ

«Մշակի» № 36-ի մէջ տպված Ասիացու ֆելետոնը շատերին դարձրեց, շատերից լսեցինք

այն նկատողութիւնը, թէ այդքան խիստ, այդքան անխնայ, այդքան անողորմ կերպով չէ կարելի մարդկանց վերաբերվել, ինչպէս վերաբերվեց Ասիացին մասնաւոր Աւստրալիայի արտասանեանցին:

Մենք խստովանում ենք մեր արած մեծ սրտալքը, որ տպագրեցինք «Մշակի» մէջ վերոյիշեալ ֆելետոնը, խստովանում ենք, որ այդքան անողորմ կերպով վերաբերվել դէպի մարդիկ, ինչպէս վերաբերվեց Ասիացին, կարելի է միայն այն ժամանակ, երբ քննադատը գիտէ որ մարդիկ, որոնց մասին ինչն գրում է, առողջ, խելքը զբոսնում մարդիկ են: Այդ պատճառով մենք հաւատացած ենք, որ եթէ Ասիացին թերթում լինէր «Մուրճ» ամսագրի մարտ ամսի ամբողջ տետրապէս և կարդացած լինէր նոյն տետրապէս մէջ զեռնագրած «Բխմարիկ հրաժարական» վերնագրով Արտասանեանցի արտաբերի տետրապէսը, —մեր ֆելետոնիստի խիղճը չէր ների իրան այդ աստիճան անողորմ կերպով ծաղրել մի հիւանդ մարդուն, այդ աստիճան խիստ և անխնայ լեզու գործածել կարեկցութեան արժանի հոգեպէս հիւանդ մարդու դէմ:

Եւ իրաւ, բայց անհրժեշտ «Մուրճ» ամսագրի մարտ ամսի տետրապէս 462-րդ էջերը, ամբողջապէս կարդանք «Իշխան Բխմարիկ հրաժարական» վերնագրով Արտասանեանցի յօդուածը, —և կը համոզվենք որ «Մուրճի» խմբագիրը աւելի արժանի է ամեն բարեմիտ մարդու կարեկցութեան և խղճահարութեան, քան թէ հեղինական և անխնայ քննադատութեան:

Ան բանը ինչու՞ն է:

Վերոյիշեալ յօդուածում պ. Արտասանեանցի նախ երկու և խորամանկ դատողութիւններ է անում Բխմարիկ գործունէութեան նշանակութեան մասին, ապա բերում է եւրոպական ամենաշատ անուր լրագրների կարծիքները հրաժարական տուած կանցելի մասին, յիշում է այնպիսի աշխարհահռչակ լրագրները կարծիքները, ինչպէս են «Journal des Débats», «Liberté», «République française», «Paris», «Parti National», «Siècle», «Radical», «Estafette», «France», «Standart», «Times», «Morning Post», «National Zeitung», «Daily News», «Pall Mall Gazette», «Saint James Gazette», և այլն, և վերջացնում է իր յօդուածը հետեւեալ տողերով (էջեր 475).

«Որպէս տեսնում է ընթերցողը, բոլոր այդ լրագրների մէջ կրկնվում է մի և նոյն նօտան, թէ Բխմարիկ լրագրի խաղաղութեան դրամատիկ էր, բայց և այնպէս, մեզ թվում է, որ այդ ճշմարտութիւնը ոչ մէկի մօտ այնքան ճիշդ չէ ձեւակերպված, որքան այդ է դաժ է «Մուրճի» մէջ:

Կրկնում ենք, որ եթէ մեր աշխատակից ֆելետոնիստը սկզբից է եթ նկատած լինէր Արտասանեանցի այդ տողերը, որոնք անտարակոյս վկայում են իրանց գրողի ծանր հոգեկան խանգարման, ուղղի անբնական գրութեան մասին, —մենք հաւատացած ենք որ Ասիացու պէս բարեկերթ մարդը երբեք իրան չէր թող տայ այդքան խիստ, այդքան անխնայ, այդքան անողորմ կերպով ծաղրել մի հիւանդ մարդուն:

Հիւանդներին պէտք է խղճալ, նրանց կարեկցել, նրանց ինչպէս, և ոչ թէ անողորմ կերպով յարձակվել նրանց վրա, կամ ծաղրել նրանց:

Այս կամ այն ձեով անխնայ քննադատել, ծաղրել կարելի է միմիայն խելքը զբոսնում մարդկանց:

Գ. Ա.

ԵՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ

Մայրաքաղաքի լրագրներին հետագրում են, որ թէ հրանից մինչև Շուտաէր երթողները երկաթուղու գծի շինելը յանձնված է անգլիական ընկերութեան, որը պատրաստվում է ձեռնամուխ լինել աշխատանքներին: Ուրիշ կողմից մի ուսաց ընկերութիւն գիտաւորութիւն ունի թոյլութեան ինչպէս պարտից կառավարութիւնից կառուցանել երկաթուղու մի ուրիշ գիծ, որը կը

միացնէ պարսից մայրաքաղաքը կասպից ծովի հետ, Բաշաի վրայով: Այդ լուրը տպված էր «Մուրճի» № 35-ի մէջ և արդէն կարդացած կը լինեն ընթերցողները:

Այդպիսի լուրեր, Պարսկաստանում երկաթուղիներ անցկացնելու վերաբերմամբ, առաջին անգամը չէ, որ կրկնվում են լրագրներում և այժմ գուցէ շատ մօտ են իրականութեան: Բայց Պարսկաստանում երկաթուղիներ կառուցանելուց, հետեւաբար և երկրի անտեսական առաջադիմութիւնից մենք ինչ օգուտներ և վնասներ կարող ենք ունենալ: Այդ հարցին պատասխանելը դժուար չէ: Ի հարկէ, Պարսկաստանը մեզ կովկասցիներն առնուածոտ հարեան երկիր լինելով, նրա շահերը կապված են մեր շահերի հետ, հետեւաբար և նրա ամենափոքր թէ բարոյական և թէ նիւթական առաջադիմութիւնը մեզ պէտք է ամենաման ուրախութիւն պատճառէ, քանի որ մենք թէ առեւտրական և թէ այլ գործերով անդադր չիվում ենք այդ երկրի հետ: Պարսկաստանում երկաթուղիներ անցկացնելը, ի հարկէ, մեծ կենդանութիւն կը ստացայ երկրին, քանի որ երկաթուղիները պէտք է անցկացնվին ահապէս տարածութիւնների վրա, մի գիծը թէ հրանից մինչև Շուտաէր, իսկ միւսը՝ թէ հրանից, Բաշաի վրայով, մինչև կասպից ծովը, այսինքն մի քանի հարաւ վերադառնալու կենդանութիւն տալուց, այնտեղ երկաթուղիներ անցկացնելը մեծ օգուտ կը բերէ ոչ թէ միայն մեր կապիտալիստներին, որոնք կարող են իրանց գումարները գործ դնել այդ բնական հարստութեանը լի, բայց անշակ երկրից օգուտը համար, այլ նոյն իսկ մեր հասարակ բանւոր և արհեստաւոր դասակարգին, և ահա թէ ինչպէս: Յայտնի է, որ Պարսկաստանում գործ չը լինելու պատճառով, ամբողջ Անդրկովկասը լցված է անստեղծ անհարկ պարտի բանւորներով և ամեն տեսակի արհեստաւորներով: Անդրկովկասից ըսկած մինչև կովկասն ու վրացիական և նոյն իսկ մինչև Ասորական կը հանդիպէ այդ բանւորների և արհեստաւորների լեգիոններին, որոնք իրանց ձեռքն են սուղ աշխատանքը, և նրանց թիւը տարուց տարի աւելանում է: Պարսկաստանից բանւորների, արհեստաւորների և մշակիկների այդ սարսափելի հոսանքի պատճառով, սեղանի աշխատաւոր դասակարգը անդորոնութեան է զատապարտվել: Սակայն եթէ Պարսկաստանում երկաթուղիներ անցկացնվին, հետեւաբար և այդ երկրի անտեսական կառավարման, այդտեղ կը բացվին բազմաթիւ գործարաններ, քաղաքներում գեանափոր աների փոխարէն կը սկսվին կառուցվել բազմաթիւ շինութիւններ, այդ երկրում գործը կը սկսի ես գալ և կը զգացվի աշխատող ձեռքերի մեծ պահանջ, հետեւաբար և մեր երկրի մըջիւնները պէս լցված պարտիկներ կը սկսեն քաշվել դէպի իրանց հարեկները, այնտեղ պահանջներին բաւականութիւն տալու համար, ասպարէզը թողնելով տեղացիներին: Ուրեմն էլ ինչ ասել կուզէ, որ պարսկութիւնից թուլամորթ դարձած մեր բանւորները և արհեստաւորները ոտի կը կանգնեն, աշխատանքի դռները կը բացվին բանւորների համար, նրանց օրավարքը կաւելանայ և արհեստաւոր աշխատանքը կը շատանայ:

Ուրիշ կողմից Պարսկաստանում երկաթուղիներ անցկացնելը մեծ տպագրէ կը բանայ մեր առեւտրականների և կապիտալիստների համար: Յայտնի է, որ Պարսկաստանը իր մէջ բովանդակում է բնական ահապէս հարստութիւն ուկու, արձայթի, պղնձի, այդ բոլորը երեսի վրա է թողված: Զը մշակված հանքեր, պիտանի ձկնաբով լի գետեր, թանկագին փայտի անտառներ և այլն, այդ բոլորը անուշագրութեան է տուած, քանի որ երկրում տեղափոխութեան միջոցներ և ձանապարհներ չը կան, մինչև անգամ սպիւրի անցուղարձ անկն էլ անհասարկ է այդ երկրում և լուսնեով անցկացրած նեղ շաւիղներով երկեկութիւնը

կատարվում է կամ էջերով, կամ ջրբնակներով կամ ուղղակի, այն էլ միշտ առաջնությունը հանդիպելու երկուսն աչքի առջև ունենալով, և հենց այդ պատճառով թէև կողմացնելից շատերը Պարսկաստանում պարսպում են առևտուրով, բայց նրանց գործունեությունը սահմանափակվում է միայն թանգազին խախտանքի և չոր մրգիչին արտահանումով, զի առևտուրը դեպի Արևմտաստան և արևմտահայաստան, այն էլ մեծ չարաբանություն էր թվում հարավային կողմից, պատճառով, քանի որ երբևէ ամենապարզ անձրևի պատճառով ձմռան պարսկաստանում այնպիսի ցիխ է գոյանում, որ ամբողջ կարավանը ստիպված է լինում մի որ և է զիջում մի քանի օր մնալ մինչև ձմռան պարսկաստանի շրջանալը, երբևէ էլ մի որ և է գետի ափում կարավանը մի քանի օր մնում է մինչև ջրի նստազինը, որը անձրևի պատճառով բարձրացած է լինում, քանի որ կամուրջներ դեռևս չկան շատ սակաւ են և կարավանը ստիպված է լինում ջրի միջով անցնել: Իսկ շատ առևտրականներ էլ առաջադիմների յարձակումից երկու կողմից իրանց առևտուրը սահմանափակում են թանգազին ակնեղենների գնելով, որոնց թագնում են կամ կոշիկների մէջ, կամ փայտի մէջ փաթեթներով կարում են ծոցում, մէջքներում, գլխաքիներում, կամ մի տիկ խոզի ու պանրի մէջ և այնպէս շատ բերում այդ երկրից: Ի հարկէ, երկաթուղիներ չլինելով Պարսկաստանում, յարաբարականները այդ երկրում կը հեղանան և կը կատարվեն առանց որ և է երկու կողմի և մեր առևտրականները կարող են քաղել իրանց պտուղները առանց ձեռքբեր փշերին դիպցնելու: Ահա թէ ինչ օգուտներ կարող է մեզ բերել Պարսկաստանում երկաթուղիների անցկացնելը:

Բայց մեր առևտրականները և գումարատէրերը պէտք է աչքի առջև ունենան և Պարսկաստանում երկաթուղիներ անցկացնելու հետ միասին առաջացած այն վնասները, որ պէտք է տուժն իրանք: Ահա թէ ինչպէս.— հենց որ Պարսկաստանում կանցկացնեն երկաթուղիներ, ախրեր է, որ իսկոյն այդ երկրի մէջ կը թափվին բազմաթիւ եւրոպացի կապիտալիստներ և անմիջապէս կը բռնեն առևտուրի բոլոր ձանապարհները, ինչպէս որ այգիների բան տեղի ունեցաւ Արդիով կասում նաւթային և այլ առևտրի վերաբերմամբ: Նրանք կը խլեն մեզանից և այն փոքրիկ առևտուրը, որը այժմ կատարվում է մեր ձեռքով և մենք չենք կարողանալով մրցել ոչ նրանց ճարտիկ հմտութիւնը, ոչ էլ նրանց առաջին գրամական ոյժի հետ, ստիպված կը լինենք, գլխինս քորելով, բոլորովին յետ քաշվել ասպարիզից: Նրանք ամենաչափն գնով երկարամեջ կապում կը վերցնեն Պարսկաստանի այն գետերը, որոնք իրանց մէջ բաշխված են անպիսի քանակութեամբ արհիւ և արտահանելու համար պիտանի ձկներ, երկար տարիների ժամանակով կապում կը վերցնեն, կամ բոլորովին կառնեն այն կառական անտառները, որոնք լի են քրքրոյ, թանգազին և արտահանելու համար հարկաւոր փայտերով կը տիրեն այն գետինները, որոնք իրանց մէջ անխորտակ են հանքային հարստութիւններ:

Ահա այս բոլորը վաղորդ պէտք է աչքի առջև ունենան մեր առևտրականները և գումարատէրերը: Միթէ այդտեղ էլ մենք ամեն բան մեր ձեռքից բաց կը թողնենք:

Ս. Ն.

ՆԱՄԱԿ ՄԵՆ՝ ԱՍՐԱԲԻՍՍՅՈՒՅՑ

Մարտի 23-ին

Սրբազան պարտականութիւն են համարում մի անգամ ևս պարզելու հասարակութեան ուշադրութիւնը դարձնել մեր դպրոցական շինութեան ողբալի գրութեան վրա: Գեղանները արդէն «ճոճել են», առատապէս սպասում է իջնել արտաքին մասի վերին քարերը թափուլու մօտ են, պատերում խռոչներ են կայծակ. անձրևների ժանտակ աչակրանները վրա կելիլով է աղղղում օտարական այցելուները վրա անախորժ սպաւորութիւն է թողնում. այս ամենը տեսնում, խօսում են, բայց ոչ ոք իր գրգռման նեղութիւն չէ կամենում պատճառել, մասնացրոյց անելով միմիայն դպրոցական դասակարգի վրա, առանց լըրջօրէն մտածելու որ հոգաբարձութեան համար այդ շատ ծանր քաղ կը լինէր, որովհետեւ արտակարգ ծախսերը ծածկելու համար ստիպված կը լինէին կամ մի տողով փակել դպրոցի դռները կամ երկու երկու շահանոց ուսուցիչներ պահել:

Վերին աստիճանի անպատուներ է այս տեսակ անմիջակ երեւոյթները հանդիպել այն հասարակութեան մէջ, որտեղ հարկը հազարներ ունեցողներ կան և կողմիցի պատասխան ցանցը իրանց ձեռքում ունեն: Սովասանջ ժողովրդից սպասելիքներ չունենք. բայց թայրեաններ, Արդիաններ, Հայրապետներ, Արտիսներ, Նալբանդներ... դրանք այնպիսի ոյժեր են, որոնց համար դրամական կարելի է առել ոչինչ չարժէ մի հազար բութի դոճակ դպրոցի վերաշինութեան համար, մասնաւոր է թէ հասարակութեան ձեռնարկներ լինէին գործին: Եթէ սիրտ կայ միտադրանք չորս հազար բութի նուիրել դպրոցին (Ա. Թայրեանի), եթէ սիրտ կայ մեծածախ կամուրջ և ուսուցիչների համար սենեակներ շինել (Ա. Արտիսի), մեզ իրաւունք չենք համարում կարծել որ այս տեսակ անձնաւորութիւններ անտարբերութեամբ կարող կը լինեն նայել դպրոցի քայքայման և մի որ և է ուսուցիչից, կամուրջից չեն դերազատի մեր մասնակիցի կեանքը և կըրթալու գործը: Այսպէս թէ այնպէս վերաշինութեան շուտով պէտք է սկսել: Որքան ուշ՝ այնքան կըրկնապատիկ ծախսեր, հետեւապէս և գործի ծանրութիւնը առաւել զգալի: Վերջապէս պէտք է ի նկատի ունենալ, որ ոստիկանութիւնը ախրեր վանալ տեսնելով, մի գեղեցիկ օր ստիպված կը լինի դպրոցի դռները փակել մեր մասնակիցի առաջ: Ամօթալի բույժ:

Բայց այս անպատուութիւնը, նախատիւրը հազար թէ կարելի լինի մարտի. վտանգանում ենք յուսալ որ մեր հրաւերը արձագանք կը գտնէ, և բարեմիտ մարդիկ էլ շտապեն փրկել դպրոցը անխտապիկէ անկուտից:

Հազարապէս երեւոյթ է մեզանում բայցարձակ կերպով բողբոջ տանուտէրի կատարած դեղձումների դէմ. բայց երկի ամեն բան իր չափն ու սահմանն ունի: Մեր տանուտէրի օգնականը նրկատելով որ նորահաստատ տանուտէրը օրինական ձանապարհից չէր լինում է, այլ ևս չը կարողանալով համբերել, հրապարակով յայտնում է, որ չէ ուշացնի հարգելի պատշաճաւոր իշխանութեան և հրաժարելի պաշտօնից, անպատուներ համարելով իր համար անբարեմիտ անձանց հետ ծառայել: Եթէ չենք սրկատելով սա առաջին միջոցարկան դէպքն է մեր կեանքում, որ և պատիւ է բերում պ. օգնականին: Եթէ շարունակ բարոյական մտաբերներ ստանալին մեր տանուտէրները, կը դուրսանային և այնքան երևա չէին անել ծայրահեղութեան հասցնել իրանց դեղձումները. ոչինչ չենք շինում, գոնե թող չը տանք քանդակու. պէտք է միջոցներ որոնել նրանց կամայականութիւնները սանձարկելու:

Վերջապէս մեր երեցիկները ը ի ս էլ արտա և տանուտէրի պարտաւորակը ներկայացրոց դատարան. հաշտարար դատարարը վճարեց պահանջը 1,500 ռ. եկեղեցու օգոյն՝ բայց տանուտէրը հարկաւոր համարեց բողբոջել այդ ան արդար, անխիղճ... վճար դէմ է գործը անցկացնել նահանգական դատարան... և այդ տեսակ բարեմիտ մարդիկ մեր գործերի դուրս են անցնում...

Գարաբախցի

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅՑ

Մարտի 10-ին

Մեր դիւրում այնքան սակաւ են պատահում միջկարական երեւոյթներ, որ նրանց հրապարակ հանելը մենք պարտաւորութիւն ենք համարում: Համարենք մի քաղաքի չափ Շուրալէրը այնքան յետ է մնացած իր հասարակական կարգակերպութեամբ և մտաւոր կողմից, որ եթէ մի լաւ երեւոյթ կամ առաջադիմութիւն կամենաս մտցնել, ահալին արեւմուտքի և դրեղ ընդդիմադրութեան կը պատահես: Այս հանգամանքին միջոցապէս նպատակ են այն մի քանի մարդկանց պարզելու, որոնք հասարակական գործի մէջ մտնելու և ժողովրդի վտանգութիւնը փայտելով, ի չարն են գործ գնում նրա վտանգութիւնը, հասարակական դրամները անխնայ խոճակով:

Մենք աւելորդ ենք համարում այս մասին պայցոյցներ առաջ բերել դանդաղ և վշտերի գուռ չը բանալու համար. հասարակութեան ամեն մի անդամի բերանից առօրեայ լալով տրտուճը բաւական դրեղ վտան է մեր տաճի համար: Ինչպէս ասեցինք, այս հանգամանքը աւելի դժուար լացնում է ամեն մի լաւ երեւոյթ հասարակութեան մէջ մտցնելու. արանից է առաջանում նաև այն իրողութիւնը, որ մեր մէջ ոչ մի հասարակա-

կան գործիչ լինի նա գիւղապետ թէ հոգաբարձու կամ երեցիկ, երկար չէ մնում իր պաշտօնում, այլ շուտով առաւել պէս յետ է քաշվում, հրաժարվում է: Ինչքը զլին մարդը, անկեղծ անհատը գործի մէջ չէ մտնում, հաստատ իմանալով, որ մի քանի սպէսներ պէտք է իր անունը կրողուն առաւ լուրեր տարածելով իր գործակալութեան մասին: Վերջապէս ակնարկներ և այս, որ մեր մի քանի առաջաւոր մարդկանց իրար հետ անդադար միտմանից և թշնամացմանից էր, որ այժմ ունենք կատարելութիւնից նրկանակած ստորաշին թօխակելով (հայ է): Պ. Թօխակելով թէ և շատ է աշխատում մեր գիւղի մարդութեան և բարեկեցութեան համար, սակայն չենք կարող չը նկատել, որ նա պարտաւորված միայն ոստիկանութեան հրամանները կարող կը լինի կատարել, և չէ կարող կազմել մեր հասարակութեան կարիքների և ցաւերի հետ:

Այս և ուրիշ երեւոյթների մասին մեր միտք թղթակցութիւնների մէջ կը խօսենք, առ այժմ հարգուեց մի ուրախալի լուր: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի գիւղի համար առհասարակ ամբողջ ժողովրդով վերականգնելու և անտանտեր ստանելը, այդ մասին աւելորդ է խօսել, մասնաւոր որ Շուրալէրն էլ սեփական վարելանոյթ և անտանտի կողմից շատ աղքատ է: Զագեամ թաղի ժողովուրդը (248 ծով) միասնաբար առնելու են իշխան թուանալներից նրանց «Մտտուց-Ձոր» և «Սիպակ-Շէն» կոչված անտանտերը, որոնց մեծ մասը վարելանոյթ են: Այս անտանտերը աւել էին մեր գիւղացի եօթն մարդ, բայց հասարակութեան ինչկերքին իշխանելու, առանց մի որ և է ակնկալութեան, առկն ժողովրդին: Որովհետեւ ժողովուրդը դրամական կողմից մեծ նեղութեան մէջ է, և այդ աչքի առաջ ունենալով կարող էր այդ գործը խանդավառ, մեր գիւղացի պ. Սիմէն Պառակեանց բանակային տոկոսով (8%) հասարակութեանը խտասացել է 15,000 բութի տալ, տարուց տարի այդ գումարը ստանալու պայմանով:

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅՑ

Մարտի 25-ին

Շուրա հասարակական կեանքի մէջ տեղի ունեցաւ մի հարուստ երեւոյթ, որի մասին անկարելի է լուռ մնալ: Այսօր քաղաքը թաղում էր պ. Գաբիթ Աղամանին, աւագ ներկայացուցչին յայտնի հարուստ վաճառականական Աղաման տան: Հանդուցեալը 5—6 տարի է հիւանդ էր հոգեկան հիւանդութեամբ: Ի հարկէ մեզ հետաքրքրողն այն չէ, որ հանդուցեալ Գաբիթ Աղամանը հարուստ վաճառական էր, որ նա ևս կարող էր իբրև հարուստ վաճառական մի քանի հարկեր բութի կտակել բարեգործական նպատակով և դրանով իր պարզը կատարած համարել. դրա համար մենք հարկաւոր չէինք համարի գրել չարժելու բայց մեզ հետաքրքրում է, որ Գաբիթ Աղամանի մասի առիթով մի նոր սկզբունք քարոզվեց վաճառական դասակարգի կողմից, սկզբունք, որը մինչև այսօր չէ ընդունել հայ վաճառականը ընդհանրապէս և շուշեցի վաճառականը մասնաւորապէս, այն է, որ փողը չէ կազմում կեանքի միակ նպատակը, այլ նա միայն միջոց է լաւ գործեր կատարելու: Հանդուցեալի ժամանակները, որդին և եղբայրը, ի նկատի ունենալով, որ նա իր առողջութեան ժամանակ միշտ փախաղ էր յայտնում յօգուտ իր քաղաքի մի մեծ բարեգործութիւն անել և թէ ներկայումս Շուրա համար մի մեծ բարեգործութիւն է իրականացնել ջրի պահանջը, որ ահա տանտանի տարիներ է քաղաքը չէ կարողանում իրագործել, համար ջուր բերելու մօտ 25—30 հազար բութի ծախքի է կարօտ, ի յիշատակ հանդուցեալի յանձն առան այդ ծախքը տալու և ջուրը բերելու. այդ բաւական չէ, նրանք ջրից կազմել ամբողջ արդիւնքը, որ ամենամիջոց պէտք է լինի 5—6 հազար բութի, յատկացնում են զարձակ քաղաքի օգոյն դանդաղ բարեգործական նպատակների համար գործադրելու: Առաջին անգամն է, որ մի հարուստ շուշեցի վաճառական այգիպիկ խոչըր գումար է նուիրում բարեգործական նպատակով. բայց հանդուցեալի կողմից և որդին դրանով դեռ չը բաւականացան, նրանք առնել են և հետեւալ նուիրելը. 1) 3200 բութի Բաղուի Մարդասիրական ընկերութեան, 2) 300 բութի Շուրա թիմական դպրոցին, 3) 300 բութի հայոց օրիորդական դպրոցին, 4) 300 բութի քաղաքային օրիորդական դպրոցին, 5) 300 բութի

րէպական դպրոցին, 6) 200 բութի յօգուտ վերանորոգութեան էջմիածնի, 7) 200 բութի յօգուտ ձեռարանի, 8) 150 բութի կուսանոց մասնատանի, 9) 50 բութի կոյսերին, 10) 150 բութի քաղաքի աղքատներին բաժանելու, 11) 100 բութի Խչքիլիէ Բաղրանոյի փանքին: Եթէ հաշուենք, որ ջուրը բերելու համար առհասարակ 25,000 բութի ծախս կը լինի, եթէ չափան 30,000 ուրեմն նուիրատուութեան գումարն համարում մինչև 35,000 բութի: Մենք այս նուիրատուութեան մեծ նշանակութիւն ենք տալիս և անպատճառով, որ համարված ենք կատարելապէս և ճանաչում ենք, որ յարգելի Աղամանները, որոնք յայտնի լինելով իբրև անխի մարդիկ, միտ հարուստ վաճառականներից չեն, որոնք ամեն օր մի մի ցանկութիւն են յայտնում բարեգործութիւն անելու և յետոյ շուտով մոռանում են:

Շուրա հայ հասարակութեան և մեզ մտով միայն անկեղծ հորհակալութիւն յայտնել հանգուցեալ Գաբիթ Աղամանի որդուն և եղբորը որ նրանք իրանց այդ բարեգործութեամբ բարեբաղին վաճառականական զատի համար և ցոյց տուին, որ փողը նրանց համար ոչ թէ նպատակ է, այլ և միջոց բարեգործութիւն կատարելու:

Հ. Առաքելեան

ՆԵՐՍԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական ուսուցիչները հարգուում են, որ թիֆլիսի ոստիկանապետ Բոսիակու հետանալուց յետոյ, կը նշանակվի ոստիկանապետի պաշտօնում Լ. Մատիցիկի, որը վերջին տարիները Քուրթիսի դատաւար էր: «Тифлисский Дистрикт» լրագրից տեղեկանում ենք, որ նա առաջ օֆիցեր էր, ապա ուսուցիչաց պատերազմի ժամանակ ոստիկանական պաշտօն էր վարում Բոլշարիայում, իսկ այդ երկրից վերադառնալով նշանակվեց Կիւլում նախ ոստիկանապետի օգնական, ապա ոստիկանապետ:

ՄՍՍԿԱՅԻ փաստաբան Գրիգոր Զանչեան, որ պէս գրող շատ բեղմնաւոր է, տալի չէ անցնում, որ պ. Զանչեան չը տալալի մի երկու գիրք: Այժմ մենք նորից ստացանք նրա երկու գրուած ներք. «Двадцатипятилетие Московского Общества» և «Дорожная Библиотека»: Այդ վերջին գրքից, մասնաւոր, շատ հետաքրքրելի է ուսանելի: Նա, պարունակելով ընդամենը 166 երկու, բարկացած է 12 յօդուածներից այլ և այլ հարցերի մասին, որոնք կրում են բան հրապարակաբարական բնաւորութիւն, և մեծ յափշտակութեամբ են կարգադրուած: Գրքից զինը 1 բութի է: Բացի արանից պ. Զանչեան շարունակում է գրել և լրագրիներում: այս օրերս «Русскія Вѣдомости» լրագրի № 73-ի մէջ նրա գեղեցիկ «Плебаро и Московскія Вѣдомости» վերնագրով յօդուածը իր վրա ընթերցող հասարակութեան ուշադրութիւն է դարձրել. դա մի գեղեցիկ և սուր գրուածք է, որ արժէ կարդալ: Պ. Զանչեան յայտնի է ուսուցիչականների մէջ, որպէս զբոսաւանական կանոնադրութեան ամենաչելք պաշտպան:

ԲՍԳՈՒՅՑ մեզ գրում են հետեւեալը. «Տեղական Մարդասիրական ընկերութեան խորհուրդը որոշել է Բագուի մէջ մի մշտական քաղաքի վարդապետ պահելու, նշանակելով նրան տարեկան 1,500 ռ. ուճիկը»:

«Новое Общество» լրագրից հարգուում է, որ այս օրերս հրատարակվեց թիֆլիսում վրաց բանաստեղծ Բ. Էրիստովի բանաստեղծութիւնների ժողովածուն:

ՆՈՐՆԱԽԻՉԵՒՆՆԵՑ մեզ գրում են. «Նշանակել մեզ մօտ ստատիկ փոփոխական է. առաւանտները և երկնայինը սաստիկ ցուրտ է լինում և փշուտ է ստուր քամի, անտանլի փոշի բարձրացնելով իսկ ցերեկով արեգակը այրում է, կարծես յուրիսի տաք օրերը լինեն»:

ՐՕՍՈՎԻՅՑ մեզ գրում են. «Կօն գետը և Արօ վան ծովը արդէն ազատ են սառուցներից, այ սասահանից արդէն եկաւ առաջին նաւը: Տարածուողի մօտ կանգնած են բազմաթիւ նաւեր նարինջներով բեռնակաւ: Սակայն նարինջները Բոսաւ վաղաքը դեռ մտած չը լինելով, այստեղ այդ միջոցը թանգ են. 10 հատ արժէ 60—70 կօպէկ»:

Պարսկերէն երանակները յետոյ մի քանի անձրևային օրեր ունեցանք թիֆլիսում: Գիշեր ժամանակ եկած մեղմ անձրևները թէև մասամբ հոգեցրին երանակը, բայց ուրիշ կողմից քորագրը սկսեց աւելի հոտել:

ԵՐԵՎԱՆԻՑ հաղորդում են «Кавказ» լրագրին, որ վերջին օրերս Երևանի կլուրի դահլիճում կարգացրեցան մի քանի հրատարակական դաստիարակները: Երևանի գրիմադրայի աւարտող չքաւոր աշակերտները օգտին: Կարգացրին դաստիարակները մարտի 14-ին ուսուցիչ Բամանովի, մարտի 25-ին՝ բժշկապետ Արծրունի (Նիսիտիլ) մի մասին, մարտի 25-ին՝ ուսուցիչ Չեստիակով «Արթուր» անհատականութեան մասին: Իսկ մարտի 18-ին կայացաւ Գայեանեան հայոց իրական դարձրի դահլիճում սիրողները մի ներկայացում յօգուտ բանաստեղծ մանամորթի: Ներկայացումից զոչացած մուտքը 208 բուրլէ է:

Կենտրոնական գրավաճառանոցի հրատարակութեամբ լայն տեսաւ կրօնի դասագիրք՝ «Սկզբունք» քրիստոնէական ուղղախառ. հաստոյ Հայաստանացի եկեղեցւոյ, աշխ. Ստեփաննոս աւագ քահանայ Տեր-Ստեփաննանի, հինգերորդ տպագրութիւն, բարեփոխած և ճիշտացրած հետեւել յաւելւածներով: 1) Համառօտ բացատրութիւն խորհրդոց սրբոյ պատարագի, 2) Գրուտ խաչի և խաչվարացի, 3) Երևանի ս. խաչի, 4) Վարդգայ ս. խաչի, 5) Սրբոց Հովնաթանայ և Գայանեանց կուսանոց նահատակութիւնը, 6) Տօն կաթողիկէ սրբոց Եջմիածնի, 7) Մեծն Ներսէս, 8) Ս. Սահակ Պարթև, 9) Սուրբ Մեսրոպ վարդապետ և հայոց գրերի գիւտը, 10) Սրբոց Աստվածանց և Վարդանանց նահատակութիւնը:

«Հիւսիսային դործակալութեան հեռագիրը հաղորդում է, որ Չատակի տներին ստացան սուրբ Ստանիսլաւի չքանչանը առաջին աստիճանի (ժապաւէն) հետեւել անձինք. թիֆլիսի նահանգի պետական կառավարչի կառավարիչ Յովնանէս Խատիսեան և հայ-ուսուրդական սինոդի անդամներ՝ Խոզափերդանց և Գալուստեանց եպիսկոպոսները:

Հրատարակից ուսուցիչ ընդունվել «կոլլատան դործիչները բառարանը» (Словарь казказскихъ дѣятелей) վերագրող գրքոյից: Կոլլատան այլ և այլ գործիչներ կենսագրութիւնները մէջ մինքն կատարեց ըստական խոշոր փաստական սխալներ, ոմանք մեր կրկին նշանաւոր տնտեսից բուրովին յիշված չեն, ոմանց ծագումը սխալ կերպով է ցոյց տուած, գործիչները մի քանիսները անունները մուտքցված են, ոմանց մասին սխալ տեղեկութիւններ են հաղորդված: Որպէս առաջին փորձ, այդ տեսակ աշխատանքը, ի հարկէ, չէր կարող կատարել լինել և ըսական է որ կուսանոց խոշոր պակասութիւններ, բայց գրքի կարգուղը կարող էր վազբել շրջաբերականով դիմել հասարակութեանը, ինչպէս կոլլատան գործիչներին հաղորդել իրան հարկաւոր ճիշդ տեղեկութիւնները: Գրքոյը տպված է Մ. Վարդանանցի տպարանում, թիֆլիսում:

Ճրանակական օպերէտային խումբը շարունակում է իր ներկայացումները թիֆլիսի թատրոնում: Ապրիլի 1-ին ներկայացրեց առաջին անգամ թիֆլիսում «Օֆելիա»-ի «Գեորգեանի դրամատիկ» օպերէտը: Տիկին Սանդրէ-Պակիւր շատ չնորհալի էր դրամատի. դերում և նրա երգերը ամբողջ ներկայացման ժամանակ վարձատրվեցան հասարակութեան ոգևորված ծախմանարութիւններով: Թատրոնը լի չէր: Հետեւել օրերը խումբը ներկայացրեց «Օրֆէյ դժոխքում» Օֆելիայի յայտնի օպերէտը, և «Նիտուշ» օպերէտը:

Ստացանք Պետերբուրգից մի տեսակ «Հայկական նշանագրերի և ծաղկագրերի» ձեռագրործի համար», գեղարվեստի և հրատարակութիւն վ. Վարդանանցի: Տառերի մի քանի օրինակները ձեռագրործի համար շատ աջող են (օրինակ երես 3-որդ): Տարախն արժէ 50 կօպէկ և ցանկացողները տեսարկը ձեռք բերելու պէտք է դիմեն հետեւեալ հասցեով. «Петербургъ, Невскій пр. Армянск. церковь, Вардану Степан. Варданянцу.»

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Այս օրերումս այստեղ յանկարծակի վախճանվեց խաչատուր քահանայ Բարսեղանեան:»

Երևանից մեզ գրում են. «Այստեղ կատարելապէս է, պարտաւ ծառերը արդէն ծաղկել են. դեղձը, ծիրանը և շրթը ստատիկ առատ պտուղ են խոտանում, իսկ խնձուրը աւելի պակաս:»

Տ. Նազարեանցի «Արօր» տպարանից լայն տեսաւ բժշկապետ Տեր-Գրիգորեանցի (թիֆլիսեցու) մի հանրամատչելի գրքոց «Խօշորայի և նրա առաջն առնելու միջոցներ» մասին: Գրքոյը շատ մաքուր է տպագրված, հասկանալի ոճով է գրված և արժէ 5 կօպէկ: Գրքոյը ժողովրդական է ընթացում է խօշորայի սկզբնապատճառները, հիւանդութեան պատկերը, հիւանդին ինքնաբերական միջոցները և ընդհանրապէս խօշորայից նահատակացանկի միջոցները մասին: Ի նկատի ունենալով որ խօշորայի սպառնում է Պարսկաստանից մեր կողմը անցնելու, անկասածելի է, որ այդ գրքոյը կարող է մեծ օգնութիւն հասցնել ժողովրդին, որի համար և խմբագրված ու հրատարակված է նա:

Գարնան սկզբնով թիֆլիսը լցվել է ամեն տեսակ աղքատներով, որոնք գաւառական քաղաքներից, գիւղերից և նոյն իսկ հարեան երկրներից զինում են թիֆլիս, երեսկայելով որ թիֆլիսում աղքատներ քիչ կան, և որ այստեղ առատաձեռնութիւնը շատ մեծ է: Այդ աղքատները մէջ կարելի է տեսնել կոյրեր, հաշմանդամներ, կաղեր, որոնք երկ և նորիւրուր վերտուր հեռու վարարալից, Երևանի կողմի գիւղերից, Ալէքսանդրօպօլ գաւառից, Մուշի կողմերից, Սայմասարի և այլն: Ինչպէս մեզ հաղորդում են, սղորմելի է դրանց դրութիւնը: Նրանց ստացած սղորմութիւնը շատ չնչին է լինում. այդպիսիները բառի բուն նշանակութեամբ փոտում են զանազան հոտած և խմուտ քարվանսարանների անկիւններում: Այդ թշուառ արարածները մասնված են կատարելապէս մոտացութեան: Բացի դրանից կէտը մուրացկաններին խիստ կերպով հաւածում են թիֆլիսեցի մուրացկանները, որոնք չեն թող տալիս, որ եկւորները իրանց հետ մըց և ն:

Երեքշաբթի, ապրիլի 3-ին, առաւօտան ժամի 8-ին դէպք վիճեանա ուղեորվելու համար, Անդրկոլլատան երկվորուտ արտակարգ զինաբաժնի թիֆլիս ժամանեց պարսից շահի ամուսինը: Երկվորուտ կայարանում խումբը բազմութեան հետ դիմաւորեցին շահի կնոջ՝ կառավարչապետի օգնական զինուոր Շերեմետով և ոտակախառնակի անդապահ Սոխոլովսկի: Շահի ամուսինը ոսկու և գունդներով մէջ բողբոլին ծածկված, դուրս եկաւ վագոնից, թուրք տիկնոջ պէս շքեղ կերպով հարգված: Շերեմետովի ու Սոխոլովսկու ձեռքը սեղմուց և նրանց բարեկուց յետոյ, մտաւ կայարանի թաղապետական դահլիճը, ուր մի քանիսը ժամ հանգստանալուց յետոյ, շահի ամուսինը իր տիկնային պակասեղ մի այլ տիկնոջ հետ նուստեց ծածկված կառքի մէջ և մի խումբ կողակներով, թիֆլիսի պարսից հիւպատոսի և բարձրագիւր անձանց ուղեկցութեամբ՝ գնաց դէպք պարսից հիւպատոսանքը, ուր և իջնանց: Ալէքսանդրեան այդու մտա նրան զինուորեցին թիֆլիսի համըրանները իրանց դրօշակներով: Ապրիլի 4-ին, ճանապարհորդ տիկնոջ արդէն ուղեորվեց երկվորուտ դէպք արտասահման:

Մ Շ Ա Կ Կ Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ՀԻՒՍԻՒՄՅՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 մարտի: Գրական օժանդակող դրամարկի նախագիծը ընդունվեց գրական ֆոնդի մասնաժողովի կողմից:

ՆԻՒԵՐՈՒԿ, 28 մարտի: Փոթորիկը աւերեց Պրօֆազատան քաղաքը. վնասը ահաղին է. շատերը վիրաւորված են, բայց սպանվածներ չը կան:

ՎԻԵՆՆԱ, 28 մարտի: Այն տեղերում, որտեղ վտանգ կայ, թէ խառնակութիւնները կը վերանորոգվեն, այսօր բոլր է կանգնած: Զօրքի հրամանատարը անձամբ տեսաւ կրած պատրաստութիւնները:

ԼՕՆԻՍՆ, 29 մարտի: Կրեմլի շատ շրջանների ընտելները դիմեցին Շաբլեր-Վաչային մի ինքրագրով, որով ինդրում են Բ. Գրան ներումն չտրահել այն քրիստոնէաներին, որոնք դատարարված են զինուորական դատարանների ձեռքով:

ՊԱՐԻՑ, 29 մարտի: Սեւ-Սեւի արտարձանում երկ տեղի ունեցած հրկէհի ժամանակ, Գիրիսի փողոցի ոտայց եկեղեցին կարելի եղաւ պահպանել: Հրկէհը տեսանելի էր Պարիզի համարեա բուր մասերից, ուստի և մի փոքր յուզմունք առաջ բերեց:

ՍՕՅԻՍ, 29 մարտի: Պանիցայի գործի քննութիւնը աւարտվեց. յանձնաժողովի զեկուցումը կը յանձնուի գլխավորական մինիստրին, որը կուղարկի այդ թուղթը պետական պրօկուրօրին:

ՎԻԵՆՆԱ, 29 մարտի: Զեռք առնված դիւտորական միջոցները և անընդհատ անձրևները արգելեց կրան անկարգութիւնների վերանորոգմանը:

ՕԻԿՍԱ, 30 մարտի: Խաղական թաղաքաւանգը ուշանալով չը հասաւ Կ. Պօլսից մեկնող ուսուցչ ընկերութեան նախին, ուստի մի քանի օր կը մնայ սուլթանի մօտ և ապա կերթայ Բաթում սուլթանի նաւով:

ՀՌՕՄ, 30 մարտի: Բրինդիլի հասաւ Մեծ Խչխան Պետր Նիկոլաւիչ իր Ամուսնու հետ և վաղը Նոցա Բարձրութիւնները կերթան Անտիպարի: Նյույուտից Բրինդիլի հասաւ Ստեկի: Թագաւորը և Կրիստի շնորհարարական հեռագրները ուղարկեցին Ստեկիին, որը վաղը կանն ուղեորվելով կանցնի Հոսի միջով: Խաղական աշխարհադրական ընկերութիւնը Ստեկիին ուղարկեց, յատկապէս ի պատիւ նրա պատրաստած ոսկէ մեդալ:

ԲԵՐԼԻՆ, 30 մարտի: Այստեղ ուշադրութիւն է դրաւում այն հանգամանքը, որ մինչև այժմ կրած հողային քաղաքականութեան, և յատկապէս ներմուծվող հացատուրիները վրա դրած մարտահրկերի դէմ ազխոցիան ստակայնում է: Կնիւսից գրում են, որ չուսով կը վերացվի խոզեր ներմուծելու դէմ կրած արգելքը:

ՎԻՍՏՐԱՎՆ, 30 մարտի: Այստեղ եկաւ Վիլհելմ Կայսրը և այցելեց Նյուսթրէթ կայսրուհուն:

ԱԹԷՆՅԻ, 30 մարտի: Ապրիլի 10-ին զինուորական աստիկ ընդհարում տեղի ունեցաւ թիւրքերի և քրիստոնէաների մէջ Սիլիսոյում: Շատերը սպանված և վիրաւորված են: Գործի հետեւեցի մասին տեղեկութիւններ չը կան:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 մարտի: Վճիռնի նահանգի ազնուականութիւնը լնդրամատոց է եղել, որ թող չը արվի գերմանացիներին այդ նահանգի մէջ հողեր գնել: «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ ապրիլի սկիզբներին Աբխազիա պիտի ուղեորվի ուսու միտիտեր կրեմնու, որը այժմ դեռ են ուսանող է Պետերբուրգի հոգևոր ձեմարանում, որը ուսումնասիրել է հարեաների ընդուն և թաղաք մանկ է այդ ընդուն Յովնան ոսկերանի ժամարութիւնը: Պետական կառավարչի մինիստրութեան մէջ դիմելու կեղծելու հարցի վերաբերմամբ կարգված առանձին յանձնաժողովը որոշել է՝ գնիլները ենթարկել առանձին ատեսնի վերահսկողութեան, որը կարգված կը լինի մինիստրութեան, քաղաքների և ոտակախոսութեան ներկայացուցիչներից: Օրհնայի ձեռնարկ ընկերութիւնը մտադիր է սեպտեմբերին կարգել ձեմաների մեծ ցուցահանդէս:

ԲԱԹՈՒՄ, 30 մարտի: Այսօր կէսօրից յետոյ, ժամը 3-ին, այտուցի հասաւ թիւրքաց «Սուլթանի» նաւով խաղական թաղաքաւանգը, որը ճանապարհորդում է դուրս դը-Պօլսեցօ կղզի մտնում տակ: Պրինցը կը մնայ Բաթումում մինչև վաղը. նա այտուցից զնաւը է Բուլախայ, ուր կայցելէ հին Գեղարթի վանքը և ապա կուղարկի թիֆլիս, Բագու և Անդրկասպական երկրը: Պրինցին այտուց դիմաւորեցին ուսուցչ իշխանութեան ներկայացուցիչները, թիւրքաց և իտալացոց հիւպատոսները:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 մարտի: Կառավարչական հաղորդարութիւն. «Այս տարվայ փետրվար ամսի ընթացքում և մարտի սկիզբներին անկարգութիւններ տեղի ունեցան մի քանի բարձրագոյն զարդացական հաստատութիւնների ուսանողների մէջ: Յուզմունքները սկսվեցան Մոսկվայում, Պետրօվսկայա-գիւղանտեսական ձեմարանում, և արձագանք դրան Բոսիլայի և Պետերբուրգի համալսարաններում, Պետերբուրգի տեխնօլօգիական և անասաւային ինստիտուտներում, Խարկովի անասնաբուժական ինստիտուտում, Նոյսի և թէպա թող կերպարտի Նովո-Ալէքսանդրեան գիւղանտեսական և անասապահութեան ինստիտուտում: Պետրօվսկայա ձեմարանում անկարգութիւնները արտայայտվեցան նրանով որ շատ ուսանողներ կուպտ կերպով խանդարեցին ներքին կարգապահութեան կանօնները այն պատրուակով, որ դժգոհ են նոր

կանօնադրութիւնից, որը դեռ նոր է մտցրած ձեմարանի մէջ, այլ և նրանով, որ կարգապահեցին բազմաթիւ ժողովներ, նպատակ ունենալով բարձրելու այդ կանօնների դէմ և ինչպէս որ այդ կանօնները փոխվեն: Վնասութիւններից երկայց, որ այդ կանօններից դժգոհ լինելու փոքր ինչ հիւսական պատճառներ իրօք չը կային, և որ ուսանողների յուզված դրութեան պատճառը, որը նըրանց մինչև անկարգութիւնների հասցրեց, պէտք է որոնել, անկասկած, այն բանի մէջ, որ նրանք չունէին պէտք եղած հասկացողութիւնը հաղանդվելու և ուսումնարանական վարչութեան պահանջները անպայման կատարելու անհրաժեշտութեան մասին: Միւս դպրոցական հաստատութիւնների մէջ տեղի ունեցած յուզմունքները այն անկարգութիւնների արտաբնայումն էր, որոնք պատահել էին Պետրօվսկայա ձեմարանի ուսանողների մէջ և զլխաւորապէս վերջիններին աշակցելու մի ցանկութիւն է եղել: Միւս հասկանալով բարձրագոյն զարգացնելու բարձր ուսանողները շահերը ընդհանուր լինելը, երիտասարդութեան մէջ, ինչպէս երեւում է հաստատ տեղեկութիւններից, տիրապետում է եղել այն համոզմունքը, և ինչպէս նախկին անկարգութիւնների ժամանակ, եղել է այն ուսանող յոյսը, թէ որքան շատ թուով անձինք են մասնակցում անկարգութիւններին, այնքան էլ քիչ կը լինի իւրաքանչիւրի պատասխանատուութիւնը և այդքան էլ թող կը լինի պատիժը: Մեծամտնութիւնը չէր համակրում անկարգութիւններին և շատերը ստիպված էին կրօնարական մասնակցութիւն ունենալու՝ պարագլուխների հայտնաբերների ազդեցութեան տակ և նոյն իսկ բուն կերպով: Թէև հաստատութիւնների վարչութիւնները միջոցներ էին ձեռք առել խրատելու համար, բայց որովհետեւ այդ խրատները հարկաւոր ազդեցութիւնը չունեցան ոչ ամեն տեղ և ոչ ամենքի վրա, ուստի հարկաւոր եղաւ դիմելու խիստ միջոցներին՝ ձեռնարկութեան, դպրոցներից արձակելուն և արտաքսելուն: Վերջին պատիժները, համեմատաբար, շատերի վրա գործ չը դրվեցան: Պետրօվսկայա ձեմարանից արձակված են 31 հոգի: Մոսկվայի համալսարանից արձակված են 55, և արտաքսված 3 հոգի: Պետերբուրգի համալսարանից արձակված են 20, և արտաքսված 2 հոգի: Պետերբուրգի Տեխնօլօգիական ինստիտուտից արձակված են 23 և արտաքսված 2 հոգի: Պետերբուրգի անասաւային ինստիտուտից արձակված են 13 և արտաքսված 2 հոգի: Խարկովի անասնաբուժական ինստիտուտից արձակված են 15 և արտաքսված 2 հոգի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 31 մարտի: Երեկվայ կառավարչական հաղորդարութեան մէջ սխալ է մտել խարկովի անասնաբուժական ինստիտուտից արձակված են 39 հոգի, և արտաքսված են 6 հոգի: «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Բուխարայի էմիրը կենդանու է այս տարի Պետերբուրգ գալ: Այդ ճանապարհորդութիւնը ի միջի այլոց մի նպատակ ևս ունի, այն է էմիրի որդուն պատերի կորպուս տալը: Պարսկաստանում երկվորուտները կը շինեն Պօլսիկով և Մերսինէս, որոնք արդէն այնտեղ ուղեորվեցան: «Гржданинѣ» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգից Վիլհելմ կայսրը կերթայ հարաւարեւմտեան նահանգները, որտեղ ենթադրութիւն կայ մեծ դորանդներին կատարել և ապա հիւսիսարեւմտեան նահանգները, որտեղ տեղի կունենայ մեծ որսորդութիւն: Անհրաժեշտ է համարված ամեն տարի երկրագործական զարգացնելու աշակերտների համար նշանակել ընդհանուր քննութիւններ: ՄԱԳԻԻԿ, 31 մարտի: Վալենցիայում տեղի ունեցան մեծ անկարգութիւններ. 15,000 հոգուց բաղկացած ամբողջ ներս մտաւ կարլիստների կուրը, այրեց կահկարասիքը և ապա դիմեց դէպի եղբուխները վանքը, փորձելով այրել այդ վանքը: Զօքը ստիպված էր հրացաններ արձակել ամբողջ վրա, 3 մարդ վիրաւորված են: Պատգաւաւորների ժողովում յայտարարվեց, որ արդէն մաւրաների ժողովում յայտարարվեց, որ արդէն եօթն ժամկէ ընթացում խառնակիչները քաղաքի տէրն էին:

ՀՌՕՄ, 3 ապրիլի: Երեկ Մեծ Խչխան Պետր Նիկոլաւիչ իր Ամուսնու հետ «Սիլիւս» իշխանական նաւի վրա ուղեորվեցան Բրինդիլից՝ Զերնօգօրիա:

ԼՕՆԻՍՆ, 3 ապրիլի: Կրեմլից ստացված լուրերին համեմատ, քրիստոնէաների վերջին ժամանակները զանգամները թիւրք դիմուտ ժանդարմների բռնութիւնների դէմ՝ ճիշդ են յայտնուում: Այդ գործի առիթով ձեռնարկված են մի ուսուտէր-օֆիցեր և մի հասարակ զինուոր, որպէս գըլ-

